ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

N: 4 << 04 >> 08 2011թ. **գ.. Լեռնուտ**

Համայնքում քաղաքացիական պաշտպանության շտաբ, տարահանման հանձնաժողով եւ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ ստեղծելու մասին

Ղեկավարվելով 29.12.1996թ. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» եւ 29.03.2002թ. «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Լեռնուտ համայնքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորման, կազմակերպման եւ իրականացման նպատակով.

1.Ստեղծել՝

1)քաղաքացիական պաշտպանության շտաբ, շտաբի պետ նշանակել համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին եւ շտաբը համալրել համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետներով:

2) Համայնքի տարահանման հանձնաժողով, հանձնաժողովի նախագահ նշանակել համայնքի դպրոցի տնօրենին եւ հանձնաժողովը համալրել դպրոցի ուսուցչական կազմից:

3) Քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ՝

ա.փրկարարական խումբ՝ 1/9 անձնակազմով, հրամանատար՝ Գ.Ալեքսանյան

բ. կապի խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Մ.Բաղդասարյան

գ. քիմիական, ճառագայթային դիտարկման կետ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Է.Գրիգորյան

դ. անհատական պաշտպանության միջոցներ բաշխման խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Բ.Գևորգյան

ե. հասարակական կարգի պահպանման խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Մ.Մինասյան

զ. գյուղատնտեսական կենդանիների եւ բույսերի պաշտպանության խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Ա.Մխիթարյան

2.Հանձնարարել՝

1) քաղաքացիական պաշտպանության շտաբի պետին՝

ա. քաղաքացիական պաշտպանության կազմավորումները համալրել անձնակազմով, զույքով եւ տեխնիկայով.

բ. կազմակերպել եւ իրականացնել համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի, կազմավորումների անձնակազմի եւ բնակչության ուսուցումը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 30.01.2003թ. թիվ 134-Ն որոշման.

գ. կազմել եւ յուրաքանչյուր տարի մինչեւ հունվարի 1-ը ճշտել համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 22.04.2004թ. թիվ 633-Ն որոշման.

3.Համայնքապետարանի քարտուղարին՝

սույն որոշման մասին իրազեկել ըստ պատկանելիության:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը իրականացնում եմ անձամբ

Լեռնուտ համայնքի ղեկավար՝ _____Վ.Բաղդասարյան